Գր. սուտանուն վդ.է զդրծս. Ծննդոց Փ(իլոնի) ի մէջ ձմերանս»... խնդրում է յիշել «եւ զմեր վդպետն. Դաւիթ ընդ նմա արժանի արասցէ Քս. յիւր արքաութեն.»։ Այս Դաւիթը Նչեցու աշխատակիցն էր Գլաձորի դպրոցում, երկրորդ «ուսուցապետը», որի մասին խօսք կը լինի յետոյ։ Գրիգորի հայրն է Բարսեղ քահանայ։ Ցիշատակարանը թուական չունի, բայց պէտք է ձեռագրի երեք մասերն էլ մի և նոյն ժամանակ գրուած լինին, որովհետև մի ամբողջութիւն են, Փիլոնի կողմից հնգամատեանի զանազան մասերի մեկնութիւն և գրուած մի և նոյն Ներսէս վարդապետի համար. իսկ Ձեռագրի երրորդ մասը գրուած է 1275 թուին. «Ցորժամ գծագրեցաւ մատեանս այս, թուականն Հայոց ՉԻԴ էր, եւ թագաւոր Լեւոն, եւ կաթողիկոս տր. Ցակոբ եւ բնակութիս. Եղիազարու վանք, եւ տեղոյս առաջնորդ տր. Հայրապետ եւ վարդապետ եւ ուսուցիչ Ներսէս ստացաւզ գրոցս եւ անուն գծողիս Բարսեղ» (Ցաւել. Բ. 62)(*)։

Երկրորդ ձեռագիրը ՉԻԸ (= 1279) թուին է գրուած, Բարսեղ Կեսարացու վեցօրեայ արարչութեան, Հարցողաց գրքի եւ նորա ուրիշ ճառերի եւ թղթերի ժողովածու «Ստեփանոս և Եսի.» (Եսայի) հմուտ գրիչների կողմից։ Հարցողաց գրքի վերջում յիշատակարանը գրուած է նոյն իսկ Ներսէս վարդապետի ձեռքով, «ի հռչակաւոր եւ յականաւոր սբ. ուխտս Եղիազարու, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցն Պաւղոսի եւ Պետրոսի եւ Անդրէի, կամաւք եւ յաւժարութիւ. եւ մեծաւ հոգաբարձութիւ. իմոյ անարժանութես. Ներսիսի սոսկ անուն վարդապետի։ Զոր ետու գրել ի խրատ ուղղութե. վարուց իմոց՝ անուղղա կենացս, եւ ամենեցուն որ պատահին սմա եւ շահեսցին ի հոգեշահ բանից աստի և վարժեալ կրթեսցեն զանձինս, գիտելով թէ որպէս արժան է կեալ ի միաբանական եղբայրանոցս ըստ այսմ եղելոյ սահմանիս» (Ցաւել. Բ. 63, պատկ. 197)։ Երկու ուրիշ յիշատակարաններ՝ մէկը վեցօրեայ արարչութեան ճառերի (107բ) և միւսը ձեռագրի վերջում գրիչների կողմից են գրուած. առաջինը «Ստեփ» (Ստեփանոս) յայտնում է իւր ոտանաւոր յիշատակարանի մէջ՝

«որ եւ Ներս. հռետոր կորովաբան.
յս.ական տեսարանացն խոհեմ տեսաւզ
անվրիպական,
ետ ինձ գրել վս. մանկանց նոր սիոնի,
որ հմտանան»։

Իսկ երկրորդը Եսային է. «զմեղապարտ գրիչս Եսի. յիշել յաղաւթս աղա(չեմ)»։ Սորան կից աւելացրել է նախկին գրիչը. «եւս եւ զստացող սորին զՆերս վդ. եւ զծ(նողս) (զ)երջանիկ բարուն, զուսուցող եւ զվարժապետ, զմաքուր անձն եւ զպայծառ հոգի...» (Ցաւել. Բ. 64, Ձեռ. № 906ԽԺ, 288բ)(*)։ Այս գրիչներից երկրորդը Եսայի Նչեցին է, որ իւր վարժապետի հետ Գլաձոր փոխադրուեց և ապա յաջորդեց նորան դպրոցի ղեկավարութեան գործում։

Մեզ համար մութ են դպրոցի ծագման հանգամանքները. Պռոշ մեծ իշխանը՝ «աշխարհաշէն» կոչուած Մխիթար Այրիվանեցու կողմից, հետամուտ և հովանաւոր եկեղեցու և իւր իշխանութեան վանքերի ծաղկման, անհաւանական չէ, որ Ներսէս Մշեցին Գլաձորում հաստատուէր նորա ցանկութեամբ և առաջարկութեամբ։ Պռոշը հոգեւոր կապեր ունէր Վարդանի հետ, հաւանօրէն, ծանօթ էր և նորա աշակերտի հետ Աղջոց Ս. Ստեփանոսում եղած ժամանակից, գուցէ և այդ ժամանակ էլ յղացուած իւր իշխանութեան մէջ բարձր վարդապետարան հաստատելու միտքը։ Նորան չյաջողուեց եկեղեցական-վարչական անկախ եպիսկոպոսութիւն հիմնել Վայոց ձորի իւր մասի համար, որովհետեւ դա կապուած էր նուիրապետական կազմակերպութեան և աւանդութեան հետ, բայց ոչ ոք կարող չէր արգելք լինել այնտեղ մի վարդապետարան-մտաւոր կեդրոն ստեղծել և այսպիսով իւր իշխանութեան այս կողմից առանձին փայլ տալ. որովհետեւ դպրոցը վարդապետի անձի հետ էր կապուած, երբեմն և անկախ հոգեւոր իշխանութեան կամ նուիրապետութեան կամքից։ Վարդանի, Որոտնեցու, Տաթեւացու, Սիմէոն Այրիվանեցու կեանքից գիտենք, թէ ինչպէս նոքա իրենց աշակերտների հետ մի տեղից միւսը փոխադրուել կարող էին իրենց ցանկութեան, երբեմն և յաջող և անյաջող բերմունքների հետեւանքով։ Ցամենայն դէպս Գլաձորի դպրոցը հիմնւում է Պռոշի կենդանութեան ժամանակ և այն էլ ոչ հեռու նորա «դարբասից», որ Արկղունիքն էր։

Մեզ համար մութն է նաև, թէ ի՞նչ բնոյթ ունէր Պռոշեանների հովանաւորութիւնը դպրոցի նկատմամբ. այնքան բազմաթիւ աշակերտներ, որ խմբուել էին Ներսեսի, և յատկապէս Եսայի Նչեցու շուրջը, պէտք է իրենց նիւթական ապրուստի միջոցներն ունենային. բոլորովին մի նոր վանք, առանց անցեալի հեղինակութեան, սրբութեան, հռչակի. առանց կալուածների և հաւատացեալների նուիրաբերութեան անկարող էր կերակրել այդքան բազմութիւն, որ հաւաքւում էր հայ աշխարհի ամենահեռաւոր անկիւններից՝ Կիլիկիայից սկսած, Երզնկայից, Տարօնից, հիւսիսային Հայաստանից ևն.։ Երկու յիշատակարանների մէջ միայն ակնարկուած է Պռոշեան պայազատների յարաբերութիւնը դէպի Գլաձորի դպրոցը. 1317 թուին Սարգիս աբեղան և «բանի սպասաւոր» գրիչը, յայտնում է, թէ Վայոց ձորը, ուրեմն և Գլաձորը, ուր ապրում

(*) Ձեռ. Տաթեւի N° 59, այժմ Էջմ. N° 3932։ Սկզբից ընկած է երեք թերթ. յետին ստացողն է Սիմէոն վարդապետ, որ նոյնացնում ենք Սիմէոն Այրիվանեցու հետ, ծագմամբ Տաթեւից։

(*) Փակագծի մէջ առնուածները լրացնում ենք. փչացած է և ցեցակեր։